

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄՍԱՆ

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին: Անցած 10 տարիների ընթացքում դրսևորվեցին ինչպես օրենքի կենսունակությունն ու հասարակական անհրաժեշտությունը, այնպես էլ ի հայտ եկան մի շարք բացթողումներ¹, որոնց վերացումը կբարձրացնի օրենքի կիրառելիությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է.

- 1) “հարցում” հասկացության մեջ ներառել նաեւ էլեկտրոնային հարցումը, ինչպես նաեւ սահմանել, որ հարցումը կարող է ներկայացվել հաղորդակության ցանկացած միջոցով՝ այսպիսով ապահովելով օրենքի համընթացությունը գիտական եւ տեխնոլոգիական պրոգրեսի հետ.
- 2) հստակեցնել “հրապարակում” հասկացության սահմանումը՝ հրապարակման միջոցների թվում ընդգրկելով պաշտոնական տեղեկագրերը եւ պաշտոնական վեբկայքերը, ինչպես նաև “օրենսդրությամբ սահմանված” բառերը փոխարինելով «օրենսդրությամբ չարգելված» բառերով՝ դրանով ընդլայնելով տեղեկությունը հրապարակելու միջոցների ձևերը (նախագծի 3-րդ հոդված).
- 3) հստակեցնել տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները՝ դրանք լրացնելով օրինականությունը, հավաստիությունը, խտրականության բացառումը սկզբունքներով և օրենքով սահմանված սկզբունքներից հանելով տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանման մասին սկզբունքը, որի ապահովումը գործնականում անհրաժեշտ է (նախագծի 4-րդ հոդված).
- 4) վերացնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հակասությունները² (նախագծի 6-րդ հոդված).
- 5) վերացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվող՝ տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների

¹ Մասնավորապես՝ էլնելով օբյեկտիվ պատճառներից, օրենքի 5-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդպես էլ չընդունվեցին՝ խոչընդոտելով օրենքի արդյունավետ կիրառմանը:

² Համաձայն Սահմանադրության 27-րդ հոդվածի երկրորդ մասի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ ստանալու ազատություն ունի յուրաքանչյուր ոք, այնինչ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով այդ իրավունքը վերապահված է յուրաքանչյուր անձի, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանափակված է օտարերկրյա անձանց տեղեկություններ ստանալու ազատությունը:

գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգերի վերաբերյալ դրույթները՝ օրենքի կիրառումը նվազագույնս պայմանավորելով այլ իրավական ակտերի ընդունմամբ (նախագծի 5-րդ, 10-րդ և այլ հոդվածներ)։

- 6) հստակեցնել պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը (նախագծի 7-րդ հոդված)։
- 7) տեղեկության տրամադրման մերժման հիմքերը լրացնել նոր հիմքով՝ տեղեկության տրամադրումը մերժվում է նաև, երբ տեղեկությունը Հայաստանի Հանրապետության արխիվային կամ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող այլ հավաքածուի հազվագյուտ և հատկապես արժեքավոր փաստաթղթի կամ այլ մշակութային արժեքի բնագիր կամ ոչ բավարար պահպանվածության վիճակ ունեցող փաստաթուղթ է (նախագծի 8-րդ հոդված)։
- 8) տեղեկության տրամադրումը չմերժելու հիմքերը լրացնել նոր հիմքերով՝ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա դիմողի վերաբերյալ է կամ այլ անձի վերաբերյալ է և դիմողն ունի տեղեկությունը հավաքելու, պահպանելու, օգտագործելու կամ տարածելու մասին այդ անձի համաձայնությունը, որը Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջն է, եւ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա թեւէ չի պարունակում օրենքով սահմանված տեղեկության տրամադրումը չմերժելու հիմքերից որեւէ մեկը, սակայն կոնկրետ դեպքում ունի հանրային իրական նշանակություն, դրա սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում եւ տեղեկությունը չհրապարակելն ավելի մեծ վնաս կհասցնի հանրային շահին, քան դա հրապարակելը, այսպիսով հրապարակայնության, բացության եւ թափանցիկության սկզբունը տարածելով հանրային հետաքրքրություն եւ հանրային նշանակության հարցերի վրա, ինչը նաեւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն է (նախագծի 8-րդ հոդված)։
- 9) հստակեցնել տեղեկություններ ստանալու կարգը՝ կանոնակարգելով էլեկտրոնային եղանակով տեղեկություններ ստանալը, ինչպես նաև սահմանելով տուրքերի և այլ վճարների մուծման կարգը՝ դրանով ամբողջացնելով տեղեկությունների ստացման գործընթացը և նպաստելով, որ այն գործնականում կիրառվի առանց այլ իրավական ակտերի՝ մասնավորապես ՀՀ կառավարության որոշումների և տեղեկատվություն տնօրինողի կողմից սահմանվող կարգերի ընդունմամբ (նախագծի 9-րդ հոդված)։
- 10) սահմանել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների կողմից տեղեկություն տրամադրելու համար տուրքեր և այլ վճարներ գանձելու հնարավորություն (նախագծի 10-րդ հոդված)։
- 11) սահմանել տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական հիմնարկներից, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններից անվճար ստանալու երկու նոր դեպք՝

ա) երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ դիմումատուի, ինչպես նաև դիմումատու ֆիզիկական անձի անձնական, ընտանեկան կամ նրա խնամարկյալի, հոգաբարձության տակ գտնվող իրավունքներին, ազատություններին, պարտականություններին, իրավունքների սահմանափակումներին կամ պատասխանատվությանը.

բ) երբ տեղեկությունը վերաբերում է տվյալ տեղեկատվություն տնօրինողի պաշտոնատար անձանց անուններին, ազգանուններին, կրթությանը, մասնագիտությանը, ծառայողական հեռախոսահամարներին, ծառայողական էլեկտրոնային փոստի և ծառայողական այլ հասցեներին (նախագծի 10-րդ հոդված).

12) հստակեցնել տեղեկության տրամադրումը մերժելու կարգը՝ հնարավորինս նվազեցնելով օրենքով սահմանված դրույթների տարաբնույթ մեկնաբանության հնարավորությունը (նախագծի 11-րդ հոդված).

13) ընգծել տեղեկատվության մատչելիության եւ հրապարակայնության ապահովման ոլորտում օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու համար տեղեկատվություն տնօրինողների պատասխանատվությունը (նախագծի 14-րդ հոդված):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ ՀՀ օրենքների նախագծերով առաջարկվում է ամրագրել 10 էջը³ գերազանցող յուրաքանչյուր պատճենահանված կամ տպագրված էջի, ինչպես նաև էլեկտրոնային կրիչով տրամադրվելի տեղեկությունների համար գանձվող պետական տեղական տուրքերի չափերը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել պատասխանատվություն տեղեկատվություն տնօրինողների կողմից տեղեկատվության մատչելիության եւ հրապարակայնության ապահովման ոլորտում օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու համար⁴:

Օրենսդրական նախաձեռնության փաթեթի մշակվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, անկախ փորձագետների հետ խորհրդատվությամբ: Նախագծերի փաթեթը քննարկվել է միջազգային և տեղական կազմակերպությունների հետ, ուսումնասիրվել են Մարդու իրավունքների, Կոռուպցիայի դեմ պայքարի և կայուն զարգացման ոլորտում սահմանված ռազմավարական ծրագրերը, Տեղակատվության ազատության մասին օրենսդրության շուրջ 10 տարիների կիրառման փորձն ու դատական նախադեպերը:

³ Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս գանձում չի կատարվում:

⁴ Այդ պատականությունները սահմանվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով: